

Ֆինանսավորումը կավելանա մեկ երրորդով



Երիտասարդ գիտնականների հետ հանդիպմանը խոստացել է նախագահ Սերժ Սարգսյանը

Առանցքային խնդիրների ցուցակագրման եւ ներկայացման գործընթացն արդեն ավարտված է. դեկտեմբերի 17—ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստանի երիտասարդական հիմնադրամում հանդիպում է ունեցել ավելի քան երկու տասնյակ երիտասարդ գիտնականների հետ եւ ծանոթացել նրանց հուզող խնդիրներին ու դրանց լուծմանը միտված առաջարկներին:

Հանրապետության ղեկավարն ավելի վաղ նրանց մի մասի հետ Ծաղկաձորում ունեցած հանդիպման ժամանակ խոստացել էր նման հանդիպումները դարձնել պարբերական, որոնք, նախագահի խոսքով, նպատակ ունեն երիտասարդ գիտնականների հետ անկաշկանդ մթնոլորտում քննարկել մեր երկրում գիտության զարգացմանն աջակցելու երիտասարդների ներուժը, հնարավորություններն ու առկա խնդիրները, նաեւ՝ դրանց լուծմանն ուղղված առաջարկները:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ներկայացուցիչները:

Երիտասարդները շնորհակալություն են հայտնել նախագահին՝ հանդիպումները պարբերական դարձնելու, իրենց տեսակետներն ու առաջարկները լսելու պատրաստակամության եւ գիտության զարգացման գործում երիտասարդների դերի կարեւորությունն ընդգծելու համար:

Հանրապետության ղեկավարի հետ նրանք քննարկել են երիտասարդ գիտնականների աշխատանքային պայմանների բարելավման, նրանց առաջխաղացման հնարավորությունների, երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող ծրագրերին աջակցության, ինչպես նաեւ գիտության բնագավառի վերաբերյալ օրենսդրության բարեփոխումների եւ արդի պահանջներին համապատասխանեցման, հասարակության մեջ գիտնականների հեղինակության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացման վերաբերյալ հարցեր:

Սերժ Սարգսյանը պատասխանել է երիտասարդներին հետաքրքրող հարցերին, նրանց առաջարկությունների հետ կապված որոշակի հանձնարարականներ տվել պետական համապատասխան մարմիններին եւ նշել, որ յուրաքանչյուր տարվա համար երիտասարդ գիտնականներին ֆինանսական աջակցության նպատակով կհատկացվի 100 մլն դրամ, որը կտրամադրվի գոյություն ունեցող հիմնադրամներից մեկի միջոցով: Նախագահը հանդիպման մասնակից երիտասարդներին առաջարկել է քննարկել այդ միջոցներն արդյունավետ սոփիստիկ սկզբունքները, ծրագրային ուղղություններն ու ընթացակարգերը:

Գումարները պետք է ծախսվեն նպատակային

«Պետությունն իր գիտական բյուջեով տարեկան մոտ 300 մլն դրամ երիտասարդ գիտնականների վրա ծախսել է: Եւս 100 մլն նշանակում է, որ 33 տոկոսով երիտասարդ գիտնականների ֆինանսավորումը կավելանա, եւ սա շատ զգալի ներդրում է: Երկրորդ կարեւորությունն այն է, որ այդ գումարի տնօրինումը, քաղաքականության իմաստով, արվելու է երիտասարդ գիտնականների կողմից: Պետությունը հսկելու է, որ այդ գումարները ծախսվեն նպատակային եւ իրականացնելու է վարչարարություն: Ի պատիվ մեր երիտասարդ գիտնականների՝ նրանք բարձրացրեցին ավելի շատ համակարգային խնդիրներ. գիտության կառավարում, կադրերի երիտասարդացում, գիտական չափորոշիչներ»,—լրագրողների հետ զրույցում կարեւորեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարը:

Հանդիպումը երկուստեք որակվեց հաջողված: Գիտության ոլորտի նոր սերունդը միանգամայն վստահ է՝ այսօրինակ հանդիպումներն էլ ավելի են սերտացնում պետություն—գիտություն հարաբերությունները: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչ Հայկ Մամիջանյանը կարծում է՝ բոլոր խնդիրներն այս կամ այն տրամաբանությամբ ստացան եթե ոչ լուծումները, ապա գոնե բացատրությունները. «Ստեղծվեց հնարավորություն՝ պարբերաբար նման հանդիպումներ իրականացնելու»:

«Բազմաբնույթ հարցեր քննարկվեցին եւ դրանցից ամենակարեւորն առանձնացնելը դժվար է: Կարեւորն այն է, որ հանրապետության նախագահը մեծ ուշադրությամբ ընդունեց մեր բոլոր առաջարկները, եւ ձեռք բերվեց համաձայնություն: Մենք կոնկրետ գործ ունենք անելու»,—վստահ է ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի երիտասարդ արեւելագետների խորհրդի նախագահ Սոնա Գրիգորյանը:

ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի շրջակա միջավայրի երկրաքիմիայի լաբորատորիայի ղեկավար Լիլիթ Սահակյանն էլ ընդգծեց. «Մեր եւ պետության զարգացման համար մեր ներուժն այդքան էլ չի օգտագործվում: Դրանում գուցե մեր մեղքի բաժինն էլ կա: Բայց պետք է լինեն աշխատանքային այն պայմանները, որոնք պարտադիր են գիտնականի համար, որպեսզի գիտնականն ինքնադրսեւորվի: Հուսանք, որ այս հանդիպումը մի շարք հարցերի լուծում կտա»:

Նախագահ—երիտասարդ գիտնականների հանդիպման ամենամեծ նվաճումը ԿԳ նախարարը համարում է երկրի ղեկավարի կողմից տրված հստակ ազդակը. երիտասարդ գիտնականներին պետք է լսել, իրենց հետ պետք է աշխատել, պետք է փորձել բացահայտել խնդիրները եւ խնդիրները լուծել հնարավորությունների սահմաններում. «Նախագահը խոստացավ, որ եթե այս հանդիպումներն ապացուցեն իրենց արդյունավետությունը՝ դրանք կդառնան պարբերական»:

Իրականացվող ծրագրերը աշխուժանալու միտում ունեն

Իսկ երկրի ղեկավարի հետ հանդիպումից գիտության երիտասարդ ներկայացուցիչները մեծ ակնկալիքներ ունեն՝ հատկապես խնդիրների լուծման տեսանկյունից:

Թեեւ գիտության ոլորտում դեռեւս կան չլուծված խնդիրներ, այդուհանդերձ, ոլորտի նկատմամբ պետական ուշադրությունը նկատելի է: Մասնավորապես, ԿԳՆ գիտության պետական կոմիտեն 2009—2011թթ. իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ինչպես երիտասարդ գիտական աշխատողների անհատական խրախուսմանը, այնպես էլ նրանց կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների աջակցությանը: Ընդհանուր առմամբ, երիտասարդ գիտաշխատողների աջակցության բոլոր ծրագրերի վրա տարեկան ծախսվում է շուրջ 200 մլն դրամ:

Ֆինանսավորումից բացի, վերջին շրջանում որոշակի տեղաշարժ կա նաեւ նրանց ներգրավման տեսանկյունից: Սկսած 2008թ. սահմանվել է գիտական եւ գիտատեխնիկական

գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաներ կատարող հետազոտական խմբերի կազմում երիտասարդ գիտական աշխատողների մասնակցության նվազագույն շեմ: Յուրաքանչյուր խմբում պետք է ընդգրկված լինի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտական աշխատող կամ ասպիրանտ, կամ մագիստրոս: Այդպիսի պայմանով են իրականացվել գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման թեմաների 2008—2010թթ. եւ 2011—2012թթ. մրցույթները: 2008—2010թթ. ֆինանսավորվել է 711 թեմա, 2011—2012թթ.՝ 130: Ներկայումս իրականացվող պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաների ղեկավարների շուրջ 30 տոկոսը երիտասարդ գիտական աշխատողներ են:

Երիտասարդ գիտական աշխատողների մասնակցության նվազագույն շեմ է սահմանվել նաեւ միջազգային համագործակցության շրջանակներում: Ըստ այդմ՝ հայկական կողմի յուրաքանչյուր խմբում պետք է ընդգրկված լինի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտական աշխատող: Միջազգային համագործակցության շրջանակներում 2009թ. ֆինանսավորվել է հայ—ֆրանսիական համատեղ 9 երկամյա ծրագիր, իսկ 2011թ. հայտարարվել է նոր մրցույթ: 2010թ. ֆինանսավորվում է հայ—բելառուսական համատեղ 17 ծրագիր: Հայ—ռուսական երկամյա 6 համատեղ ծրագրի համար էլ մրցույթ է հայտարարվել ընթացիկ տարում: Երիտասարդ գիտնականների աջակցության առումով զգալի դեր ունեն 2009թ. իրականացվող «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության» ծրագրերը: Այս ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվում են երիտասարդ գիտական աշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտական խմբերի (մինչև 3 հոգի) երկամյա ծրագրեր եւ ասպիրանտների անհատական աջակցության միամյա ծրագրեր: 2009թ. ֆինանսավորվել են ընդհանուր թվով 16 հետազոտական խմբերի ծրագրեր եւ 20 ասպիրանտական ծրագրեր: 2009թ. սկսած ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում երիտասարդական դպրոցների կազմակերպմանը: Նշված տարում ֆինանսավորվել է 4 երիտասարդական դպրոց. 2010թ՝ 3, իսկ 2011թ.՝ 4:

Որոշակի աշխատանքներ են տարվել նաեւ երիտասարդ գիտական աշխատողների շարժունությունը խրախուսելու նպատակով: Այդ առիթով ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին երիտասարդ գիտական աշխատողների մասնակցությանը:

Մա՝ այս եւ նախորդ տարիների վերաբերյալ: Եկող տարվա ծրագրերի մասին՝ հաջորդիվ. անմիջապես Ամանորից հետո վերոնշյալ քննարկմանը մասնակցած կազմը հրավիրվելու է ԿԳՆ՝ քննարկելու նախագահի հանձնարարականների կատարման ընթացքը, որոշելու կյանքի կոչվող պայմանավորվածությունները: Այս ամենից զատ՝ տրվելու են նաեւ երիտասարդներին հուզող առարկայական անձնական խնդիրների պատասխանները:

Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ